ՀՆԱԳՈՒՅՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանրահայտ է, որ դեռևս վաղ միջնադարում հայերի հոծ գանգվածներ բոնի թե կամովին հաստատվել են Թրակիայում՝ հետագայում բուլղարական պետության մաս կազմած շրջաններում։ Դեռևս 756 թ. բյուզանդական կայսր Կոստանդին V-ը (741—775) բազմաթիվ հայ աղանդավորների կարինից ու Մելիտինեից գաղթեցրեց Թրակիայի Ֆիլիպպուպոլիս քաղաքը։ Նրանք տեղի բնակչության մեջ տարածեցին պավլիկյան աղանդը։ Նման գաղթեցումներ տեղի ունեցան նաև հետագայում։ Հովհաննես Չմշկիկը (969—976) «Հայկական վայրերից» ու Պոնտոսից հայ աղանդավորների բռնագաղթեցրեց նույն Ֆիլիպպուպոլսում։

Երբ խոսք է լինում Բուլղարիայի հայկական գաղութի վաղ շրջանի մասին, որպես կանոն հիշատակվում է Ֆիլիպպուպոլիսը, քանզի այն եղել է և՛ ամենահինը, և՛ ամենամեծը, և՛ ամենաերկարակյացը, բայց չպետք է ստեղծվի այն թյուր կարծիքը, որ Ֆիլիպպուպոլիսը մասնավորապես, և Թրակիայի հայ գաղութն ընդհանրապես, միջին դարերում լոկ աղանդավորներից էր բաղկացած։ Այնտեղ զգայի թիվ էին կազմում և հայադավանները։

Մի կարևոր աղբյուր, որի հունարեն բնագիրը միայն վերջերս հրատարակվեց, հնարավորություն է տալիս ընդարձակելու Բուլղարիայի միջնադարյան հայկական գաղութի աշխարհագրական արեալը։ Խոսքը Կյուրեղ Ֆիլեացու (1015—1110) վարքի մասին է։

Կյուրեղ Ֆիլեացին առաջին անգամ գիտական աշխարհին հայտնի դարձավ միայն 1895 թ., երբ հույն գիտնական Սպիրիդոն Լամբրոսը հաղորդեց նրա վարքը բովանդակող Աթոնի կարակալլայի վանքի մի ձեռագրի (№ 42, 1341 թ., 47—203 թերթեր) մասին[1]։ Այնուհետև այդ ձեռագիրն ուսումնասիրեց և նրանից ընդարձակ քաղվածքներ կատարեց Խր. Լոպարյովը[2]։ 1964 թ. «Վարքն» ամբողջությամբ (հունարեն բնագիրը և ֆրանսերեն թարգմանությունը) հրատարակեց է. Սարգոլոգոսը[3]։

«Վարքի» հեղինակն է Նիկողայոս Կատասկեպենոսը, որը Կյուրեղ Ֆիլեացու ժամանակակիցն էր և գրեթե հայրենակիցը, որով «Վարքի» փաստական նյութը դառնում է միանգամայն արժանահավատ։

Կյուրեղ Ֆիլեացու վարքում կան բազմաթիվ արժեքավոր պատմական տեղեկություններ Բյուզանդիայի և Բուլղարիայի[4] XI—XII դդ. առաջին տասնամյակի պատմության վերաբերյալ (պեչենեգների Թրակիա կատարած արշավանքների, նորմանների հարձակումների, ինչպես նաև Ալեքսիոս Կոմնենոս կայսեր ռազմական գործունեության մասին՝ նախքան գայիսոնը ստա-

---

[1] Sp. Lambros, Catalogue of the Greek manuscripts on Mount Athos, vol. I, Cambridge, 1895, 132. *Այժմ հայտնի են «Վարքի»[2] գրչագիր ևս* Cod. Marcianus graec. II, 104 (XVI դ.) և Cod. Athos Lavra H 191 (XVIII դ.)։

[2] Хр. Лопарев, Описание некоторых греческих Житий святых („Византийский временник", т. IV, вып. 3 и 4, СПб., 1897, стр. 378—401).

[3] „La Vie de Saint Cyrille le Philéote Moine byzantin (+1100)". Introduction, texte critique, traduction et notes par Etienne Sargologos. Subsidia Hagiographica № 39, Bruxelles, 1964։ *Դրախոսված է Ա. Պ. Կաժդանի կողմից տե՛ս* „Византийский временник", *հ. 28, 1968։ էջ 302—304, ինչպես նաև* P. Karlin-Hayter, L'édition de la Vie de S. Cyrille le Philéote par E. Sargologos, «Byzantion», *հ. 34, 1964, էջ 608—610։ Վերջինս Կյուրեղ Ֆիլեացու մահվան թվականն ուղղում է՝ 1120 թ., մի բան, որ Ա. Պ. Կաժդանը մերժում է։*

[4] *Բուլղար պատմաբանները հատուկ ուշադրություն դարձրին այդ «Վարքին»՝ Բուլղարիայի պատմության վերաբերյալ նյութեր քաղելու համար։* (Васил Гюзелев, Сведения за историята на Варна и Анхиало (Поморие) през XI в. в Житието на Кирил Филеот («Известия на Българското историческо дружество», кн. XXVIII, 1972, стр. 315—323).

նալը և դրանից հետո՝ Ալեքսիոս Կոմնենոսը եղել է Կյուրեղ Ֆիլեացու մտերիմներից, հաճախ հանդերձ ընտանյոր այցելել նրան։ Աղբյուրներից հայտնի է, որ Ալեքսիոս Կոմնենոսը մի քանի անգամ եկել է Թրակիա, և հայերին ու պավլիկյաններին «ուղղափառության» դիրքը բերելու ջանքեր գործադրել։ Պատահական չէ, որ Կյուրեղ Ֆիլեացին ևս, ինչպես կտեսնենք, նույն վայրում նման աշխատանք է տարել՝ «Վարքում» «հերետիկոս» հորջորջված հայադավանների մեջ։

«Վարքը» հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ համենայնդեպս XI դ. երկրորդ կեսին Վառնա քաղաքում եղել է հայ համայնք։ Ստորև տալիս ենք մեզ հետաքրքրող հատվածների թարգմանությունը։

«Մեր սուրբ հայր Կյուրեղ Ֆիլեացու վարքն ու քաղաքավարությունը և հրաշքների մասնակի պատմությունը, շարադրված սուրբ Նիկողայոս Կատասկեպենոսի կողմից։

ԳԼՈՒԽ 28

1. Մի անգամ սուրբը հանդիպեց մի հայի և իր աստվածային իմաստությամբ հագեցված խոսքերով համոզեց նրան հրաժարվել հայրենի դավանանքից և մտնել ընդհանրական ու առաքելական եկեղեցի...[5]։

4. Ահա այսպիսի և այլ բազում խրատներով նա համոզում էր հայ քրիստոնյային (τῷ τῶν Ἀρμενίων Χριστιανῷ), որի երեխաներին իրենց մոր հետ միասին որոշ ժամանակ անց գերի տարան։ Նա եկավ ծերունու մոտ և պատմեց իր գլխին եկած բոլոր փորձությունների մասին։ Իսկական կարեկցողը նրա հանդեպ կարեկցանքով լցվելով, մի քանի քրիստոսասեր մարդկանց դիմեց և նրանք բավականին դրամ տվեցին՝ գերիներին փրկագնելու համար։ Ահա այդ [դրամը] հայ քրիստոնյան առնելով, ուղեց ոտքով Վառնա գնալ, քանզի նա բնիկ այդտեղից էր։ Սուրբը նրան խորհուրդ էր տալիս այդ բանը չանի, քանզի ավազակները ոչ միայն իր մոտ եղած [դրամը] կխլեն, այլև սեփական կյանքը։ Նա ասում էր նրան. «Իմ կարծիքով քեզ համար նախընտրելի է այստեղից Վառնա գնացող նավերից մեկը նստես, քանզի նավաստիները մեզ ծանոթ են և հավատացյալ մարդիկ»։ Նա պատասխանեց. «Քամին նպաստավոր չէ և ինձ թվում է, թե [մոտակա օրերում] էլ այդպիսին կլինի։ Դրա համար ես շտապում եմ ոտքով ուղիղ ճանապարհով գնալ»։ Սուրբն ասաց. «Նկատի ունենալով քո մոտ եղած դրամը, ես խորհուրդ չեմ տալիս գնալ, քանզի վտանգն ակնառու է»։ Նա ասաց. «Դու ինձ համար աղոթի՛ր, հայր, և թող կատարվի կամքն աստծո»։ Սուրբն ասաց. «Աստվածային կամքը դա աստծո հրամաններն են, բանական բնության կամքը՝ աստվածային կամքի կատարումը, մարմնական կամքը՝ աստվածային օրենքի խախտումը, իսկ աստծո կամքը նրա ծառաների կամքն է, որից դու հեռացել ես. ես ինձ անմեղ եմ համարում։ Արդ, եթե որոշել ես գնալ, գնա, և աստված ինչ օգտակար է մեր հոգուն կկատարի... Երբ նա [վանքից] իջավ գյուղ, պատահմամբ հանդիպեց երկու զինվորների, որոնք ոտքով, ինչպես ասացին, պիտի գնային Զյուգոս[6], *այսինքն այն ճանապարհով, ինչ հայ քրիստոնյան։ Մի քիչ ճանապարհ կտրելով, [զինվորներն] սկսեցին հարցուփորձ անել նրան, ո՞վ է, և ո՞րտեղից, ի՞նչն է գործը, որ այդպես շտապում է։ Նա պատասխանեց ու ասաց նրանց ողջ ճշմարտությունը։ [Զինվորներն] իմանալով, որ նրա մոտ դրամ կա, իսկույն սպանեցին նրան։ Ծնողների խոսքը լսող մեկը չկա, որ փրկված լինի։ Ահա այդ է խոսք չլսելու արդյունքը։ Այդպես է պատվում Անհնազանդությունը իրեն պատվողներին։ Եթե որևէ մեկը սրբի ասածը մարգարեություն անվանի, նա սխալված չի լինի»։*

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

---

5 «Վարքի» 28-րդ գլխի § 1-ի շարունակության մեջ և ամբողջ §§ 2—3-ում մանրամասն շարադրված են Կյուրեղ Ֆիլեացու՝ հային ուղղված «համոզիչ» փաստարկները, որոնք որևէ պատմական արժեք չներկայացնելու պատճառով կրճատում ենք (բնագրային ընդգծումները մերն են—Հ. Բ.)։

6 Գտնվում է Բալկանների արևելյան մասում, Ստարա Պլանինայում։